Քայլեր դեպի անվտանգ առողջապահություն

Անհրաժեշտ է՝

- Ստեղծել «կանաչ անձնախումբ»:

Ստեղծեք աշխատանքային խումբ վարչակազմից, տնտեսվարներից և այլ մարդկանցից, որոնք տվյալ պահին պատասխանատու են թափոնների հետ կատարվող աշխատանքի համար:

Այդ խումբը պետք է որոշի՝

  - Թափոնների քանակը և կազմը, որոնք գոյանում են հիմնարկում և ենթակա են այրման և վերամշակման:
  - Սեփական կամ հրավիրված կոնսուլտանտի ուժերով անցկացնել թափոնների աուդիտ, որպեսզի մշակվի և ներդրվի թափոնների ղեկավարման ռազմավարությունը, որը կընդգրկի միջոցներ թափոնների նվազեցման, վերամշակման և երկրորդային օգտագործման համար:
- Նշանակել պատասխանատու անձ, որպեսզի նա գործնականում իրարագործի թափոնների ղեկավարման ռազմավարությունը:
- Սովորեցնել աշխատակիցներին հասկանալու բժշկական թափոնների այրման հետևանքների մասին: Աղբ հավաքողները, բուժ. քույրերը, բուժակները, բժիշկները, վարչական և սննդի բլոկի անձնակազմերը պետք է իմանան թափոնների անհիմն այրման վնասակար հետևանքների մասին: Նաև այն մասին, որ գոյություն ունեն աղբի մշակման ոչ թանկ և ավելի անվտանգ այլընտրանքային եղանակներ:
- Հնարավորինս վերամշակել թափոնները: Մի շտապեք դրանք անհապաղ դեն գցել: Այդ նյութերի մշակումից կարելի է ստանալ երկրորդային օգտագործման նյութեր: Կարելի է մշակել թուղթը, ապակին. պլաստիկը և պոլիէթիլենային իրերը:
- Դեն մի գցեք այն, ինչը կարելի է օգտագործել կրկին անգամ:
- Մի այրեք այն, ինչը կարելի է այլ անվտանգ եղանակով վերամշակել: Ոչ մեծ քանակի հիվանդանոցային թափոնները կարելի է ավտոկլավիզացիայի ենթարկել, մշակել միկրոալիքներով կամ այլընտրանքային եղանակներով և ոչ թե այրել:
- Հնարավորինս դադարեցրեք սնդիկ պարունակող սարքավորումների օգտագործումը և դարձեք սնդիկ պարունակող սարքավորումներից ազատված հիմնարկ:
- Անհրաժեշտ է աստիճանաբար պակասեցնել ՔՊՊ-ի /քլոր պարունակող պլաստ զանգվածների/ օգտագործումը , իսկ հետագայում գործնականորեն լրիվ դուրս մղել այդպիսի նյութերը ձեր հիմնարկից:
- Բանակցություններ տանել մատակարարողների հետ՝ առավել տոքսիկ նյութերի ներկրումը հիմնարկներ պակասեցնելու և հետագայում դադարեցնելու վերաբերյալ: